ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ՏՈՒՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐԵԱՆ
susana.khachaturyan@armenianchurch.ge

Վրաստանը բազմազգ պետութիւն է: Բնակչութեան 59%ը վրացիներ են, բնակւում են նաեւ հայեր, ռուսներ, ադրբեջանցիներ, աբխազներ, օսեր, յոյներ եւ այլք:

Վրաստանում հայերը բնակուել են հնագոյն ժամանակներից: Նրանց թիւը երկրում աւելացել է Ե. դարում, երբ Մեծ Հայքից անջատուած հայաբնակ միքանի գաւառներ միացուեցին Վրաստանին, եւ 451ին՝ պարսիկների դէմ հայերի ապստամբութիւնից յետոյ, Մամիկոնեան իշխանական տոհմից փրկուած ներկայացուցիչներն ապաստանեցին Վրաստանի Գուգարաց Բդեշխութիւնում: Արաբական տիրապետութեան շրջանում նոյնպէս բազմաթիւ հայեր Հայաստանից գաղթել են Վրաստան: Հայերի գաղթը Վրաստան շարունակուել է նաեւ ԺԳ.-ԺԸ. դարերում:

Հայկական համայնքներ են ձեւաւորուել Վրաստանի տարբեր գաւառներում, խոշոր համայնքներից մէկը ձեւաւորուել է մայրաքաղաք Թբիլիսիում, որտեղ ԺԸ. դարում հայերը կազմում էին բնակչութեան գերակշիռ մասը, գործում էին բազմաթիւ արհեստաւորական համքարութիւններ: ԺԹ. դարի ընթացքում այստեղ կազմաւորուել եւ հզօրացել է հայ բուրժուազիան (Մանթաշով, Արամեանց, Ղուկասով եւ այլք), որին պատկանում էր Թիֆլիսի արդիւնաբերական ձեռնարկութիւնների եւ առեւտրական տների շուրջ 60%ը: Հայ համայնքի ներկայացուցիչները ղեկավար պաշտօններ են զբաղեցրել քաղաքի կառավարման կառոյցներում: Թբիլիսին ունեցել է աւելի քան 40 հայազգի քաղաքապետեր:

ԺԹ. դարի սկզբից Թիֆլիսը եղել է հայ հոգեւոր-մշակութային, կրթական, առեւտրա-արդիւնաբերական խոշոր կենտրոն եւ առանցքային նշանակութիւն է ունեցել հայ հասարակական-քաղաքական կեանքի ձեւաւորման ու զարգացման գործում:

Այսօր, սակայն, յատկապէս Թբիլիսիի միջին եւ երիտասարդ տարիքի հայազգի բնակչութեան մեծամասնութիւնը չի տիրապետում հայերէնին, գիտի սոսկ կենցաղային լեզուն եւ մեծաւ մասամբ հեռու է իր արմատներից:

Ուրախալի է, որ Հայ Առաքելական Եկեղեցու Վիրահայոց Թեմը, աշխուժ գործունէութեամբ նուիրուած է հային Հայաստանեայց Եկեղեցու շուրջը համախմբելու գործին: Այդ գործունէութեան ակնառու արդիւնքը Վրաստանի տարածքում գործող 55 հայոց եկեղեցիներն են, որոնք բոլորն էլ վերակառուցուած, վերականգնուած եւ վերաօծուած վիճակում են: Թեմում նպատակային է չդադարող պայքարը հայոց բռնագրաւուած 442 եկեղեցիները Թեմին վերադարձնելու պահանջով:

Սակայն միայն հոգեւոր գործունէութեամբ չի սահմանափակւում Վիրահայոց Թեմի առաքելութիւնն իր առաջնորդի գլխաւորութեամբ: Հայոց լեզուի պահպանութիւն, հայ մշակոյթի զարգացում, սովորութիւնների, աւանդոյթների փոխանցում սերունդներին, հային հայեցի դաստիարակութիւն եւ ազգային հպարտութեան ներշնչում – ահա առաջնահերթութիւններ, որ իրականացնում է Վիրահայոց Թեմն իր հոտի շրջանում:

Տեղերում քրիստոնէական գաղափարներն արմատաւորելու եւ տարածելու, Հայ Առաքելական Եկեղեցու պատուիրաններով հաւատացեալներ աճեցնելու հետ միասին թեմի հոգեւոր ծառայողները իրենց ուշադրութեան ներքոյ են պահում նաեւ հայութեան կրթութեան, մշակոյթի զարգացման հարցերը եւ երիտասարդութեան գործունէութեան ուղղորդումը:

Այդ նպատակին է ուղղուած թեմում հայերէնի ուսուցման մէկօրեայ դպրոցների գործունէութիւնը, որի թիրախայինը հային մայրենի լեզուն սովորեցնելու, հայոց եկեղեցու եւ հայ ժողովրդի պատմութեանը ծանօթացնելու գաղափարներն են:

Կիրակնօրեայ դպրոցների հիմքը Թբիլիսիում դրուել է դեռեւս քսան տարի առաջ (1990ականների կէսերին) թեմի առաջնորդ երջանկայիշատակ Տէր Գէորգ արքեպիսկոպոս Սերայդարեանի կողմից:

Ներկայումս գործում են Թբիլիսիի «Սուրբ Գրիգոր Նարեկացի» շաբաթօրեայ, «Սուրբ Եղիա Մարգարէ» կիրակնօրեայ դպրոցները, Բաթումի «Սուրբ Մեսրոպ Մաշտոց», Քոբուլէթի «Վռամշապուհ» եւ Օզուրգեթիի «Սահակ Պարթեւ» մէկօրեայ դպրոցները: Ծրագիրն այս դպրոցներում երկամեայ է: Ուսումնական դասընթացն աւարտելուց յետոյ շրջանաւարտներին տրւում է վկայագիր:

Հայերէնի ուսուցման մէկօրեայ դպրոցներում ուսանում են 10 եւ բարձր տարիքի հայորդիները, ովքեր սովորում կամ արդէն աւարտել են օտարալեզու դպրոցները: Կիրակնօրեայ դպրոցներում նրանք ուսանում են նախնիների լեզուն, ծանօթանում հայ ժողովրդի եւ հայոց եկեղեցու պատմութեանը: Այս դպրոցների սովորողները նաեւ «Հայարտուն» Կենտրոնում գործող ստեղծագործական խմբերի անդամներ են, մասնակցում են տարբեր միջոցառումների եւ իրենք էլ դառնում են նախաձեռնողներ: Կիրակնօրեայ դպրոցներում դասաւանդում են վաստակաշատ ուսուցիչներ, հայոց լեզուի եւ գրականութեան դասաւանդման արհեստավարժ մասնագէտներ Ռոզա Զոհրաբեանը, Թամարա Գաբոյեանը, Սաթենիկ Դանիէլեանը:

Բաթումի քաղաքի Սուրբ Փրկիչ Եկեղեցու Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անուան մէկօրեայ դպրոցը բացուել է 2007ին: Այնտեղ սովորում են տարբեր տարիքի աշակերտներ, որոնց թւում՝ նաեւ այլազգիներ:

Միօրեայ դպրոցներում ուսուցումը տարւում է կրթութեան բաժնի (տնօրէն՝ Եւգենիա Մարկոսեան) կազմած եւ թեմի առաջնորդի կողմից հաստատուած միասնական ծրագրով: Ուսուցման երկու տարիների ընթաց-

քում սովորողների առաջադիմութիւնը ստուգում է ընդհանուր թելադրութիւնների, փոխադրութիւնների եւ գրաւորների քննարկումների միջոցով:

Դպրոցներում հայ աշակերտների թիւը աւելացնելու եւ հայ երեխային հայոց դպրոց ուղղորդելու նպատակով որոշուեց հիմնաքար դարձնել մանկահասակ երեխայի հայեցի դաստիարակութիւնը:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄ



«ՀԱՅԱՐՏՈՒՆ»

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Թբիլիսիում տասնամեակներ շարունակ չի գործել ոչ մի նախադպրո-ցական կրթական հաստատութիւն: 2011 Հոկտեմբերից, Վիրահայոց Թեմի առաջնորդի նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ թեմում սկսեց գործել «Սուրբ Մովսէս Խորենացի» նախակրթարանն իր 8 աշակերտով: Ներկայումս նախակրթարանում սովորում է շուրջ 60 երեխայ: Գործում է երկու խումբ՝ աւագ եւ կրտսեր: Երեխաների դաստիարակութեան գործում զբաղուած են երեք ուսուցիչ եւ մէկ դայեակ: Օրն սկսւում է եկեղեցու ներսում ժամերգութեանը երեխաների եւ նրանց ծնողների մասնակցութեամբ եւ քահանաների օրհնութեամբ: Նախակրթարանում երեխաները բացի խաղից եւ այլ զուարճութիւններից, սովորում են նաեւ գրաճանաչութիւն, երգ, պար, նկարել, ծեփել, ձեռքի աշխատանք, ստանում են նախնական գիտելիքներ քրիստոնէական դաստիարակութիւնից, թուաբանութիւնից, շրջակայ միջավայրից եւն.:

Նախակրթարանի հիմնական նպատակներն են պահպանել եւ ամրապնդել երեխայի ֆիզիկական, բարոյական եւ հոգեկան առողջութիւնը, հետեւել երեխաների ներդաշնակ զարգացմանն ու

դաստիարակութեանը: Նախակրթարանի գործունէութեան գերագոյն նպատակը հայ երեխաներին նախապատրաստել եւ հայկական դպրոց ուղղորդելն է, որտեղ տարէցտարի նուազում է աշակերտութեան թիւը:

Կեանքն ապացուցում էր, որ Թբիլիսիում անհրաժեշտ է ունենալ հայկական մի կառոյց, որտեղ կենտրոնացուած լինի հայութեան կրթական, մշակութային դաստիարակութիւնը եւ համակարգուի երիտասարդութեան շրջանում տարուող աշխատանքը: Եւ ահա 2011ին թեմի առաջնորդ գերաշնորհ Տէր Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանի նախաձեռնութեամբ եւ Վիրահայոց առաջնորդարանի, ռուսաստանաբնակ գործարար Բորիս Սաակովի ու վրացահայ մի խումբ գործարարների հովանաւորութեամբ, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու հարեւանութեամբ կառուցուեց հայ արուեստի տունը, որի հանդիսաւոր բացումը կատարուեց նոյն թուականի Յունիսի 12ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսի՝ հովուապետական այցով Վրաստան կատարած այցի ժամանակ: Իր հայրապետական օրհնութիւնը բերելով՝ կաթողիկոսը շնորհաւորեց հայ համայնքին կենտրոնի բացման առիթով, մաղթեց, որ այն դառնայ հայաշունչ մշակութային, ազգային, հոգեւոր մի նոր օջախ՝ պահպանելով պատմական թումանեանական «Հայարտուն» Կենտրոնի բարի աւանդոյթները:

ԹՈՒՄԱՆԵԱՆԱԿԱՆ «ՀԱՅԱՐՏՈՒՆ» ԿԵՆՏՐՈՆԻ ՆՈՐ ԿԵԱՆՔԸ

Վրաստանում խորհրդային կարգեր հաստատուելուց յետոյ Յովհաննէս Թումանեանի հիմնած «Հայ Գրողների Կովկասեան Ընկերութիւնը» վերակազմաւորուեց եւ 1921 Մարտի 29ին գրականութեան, երաժշտութեան, նկարչութեան, թատրոնի աշխատողների խորհրդակցութիւնում որոշուեց արուեստի հայ աշխատողներին տրամադրուած շէնքը անուանել «Հայարտուն» եւ կոչել Վահան Տէրեանի անունով:

Իր բացման օրից Վիրահայոց Թեմի «Հայարտուն» Կենտրոնը ստանձնեց Վրաստանում հայ ստեղծագործական միտքը համախմբելու, մշակոյթը զարգացնելու, մայրենին պահպանելու ազգանուէր առաքելութիւնը: Այսօր արդէն «Հայարտուն»ը (ղեկավար՝ Վիրահայոց Թեմի մշակոյթի բաժնի տնօրէն Լեւոն Չիդիլեան) կայացած կենտրոն է, որտեղ համախմբուել են Վրաստանի ստեղծագործական միութիւնները.- Վրաստանի Հայ Գրողների «Վերնատուն» Միութիւնը (նախագահ Գէորգ Սնխչեան), Հայ-վրացական Գրական Կապերի «Կամուրջ» Հասարակական Կազմակերպութիւնը (նախագահ Անահիտ Բոստանջեան), Վրաստանի Հայ Մտաւորականների Միութիւնը (նախագահ Ենոք Թադեւոսեան), Վրաստանի Հայ Նկարիչների Միութիւնը (նախագահ Մերուժան Շահումեան), «Գարի Դաւթեան» Տիկնիկային Մշակոյթի Տունը (տնօրէն Ժաննա Դաւթեան), Վրաստանի Հայ Կանանց «Շուշանիկ» Միութիւնը (նախագահ Սուսաննա Խաչատրեան):

«Հայարտուն» Կենտրոնում գործում են «Ներսէս Շնորհալի» պատանեկան երգչախումբը, «Տարօն» ազգագրական պարի համոյթը, դուդուկի, դհոլի դասարանները, «Հայոս Բենդ» վոկալ-գործիքային համոյթը, գեղագիտական դաստիարակութեան խումբը եւն...:

«Ներսէս Շնորհալի» մանկա-պատանեկան երգչախմբում 7-15 տարեկան դեռահասները սովորում են հայ ազգագրական, հայրենասիրական երգեր, կատարում դասական, հոգեւոր, ժողովրդական երգարուեստի նմուշներ: Երգչախումբը մասնակցում է Վրաստանում եւ Հայաստանի Հանրապետութիւնում կազմակերպուող մրցոյթների, փառատօների, գալա-համերգերի եւ ամէն անգամ վերադառնում մրցանակներով եւ պատուոգրերով: Տարէցտարի հասունանում է երգչախումբը, նրա արդէն կայացած անհատ կատարողները համալրում են Սուրբ Գէորգ եւ Սուրբ Էջմիածին եկեղեցիների երգչախմբերի շարքերը կամ փոխադրւում վոկալ գործիքային համոյթ, իսկ պատանեկան խումբը նորացւում է նորեկներով: Երգչախմբի խմբավարն է վաստակաշատ երաժիշտ Մարիա Աբուլեանը, պարապմունքներն ընթանում են Կարէն Միրզոյեանի դաշնամուրային նուագակցութեամբ:

Կենտրոնի ուշադրութեան ներքոյ է գտնւում նաեւ ազգային նուագարանների արդիականացումը: Այստեղ 9 եւ բարձր տարիքի պատանիները սովորում են գրագէտ դուդուկ եւ դհոլ նուագել: Նրանց մատուցւում է ազգային նուագարանների ստեղծման պատմութիւնը, հաղորդւում են տեղեկութիւններ նուագարանների վարպետ կատարող-ների մասին: Դասերը վարում են դուդուկահար Իւանէ Մկրտչեանը եւ դհոլահար Ռոբերտ Կաշաւանիձէն: Ազգային նուագարաններով «Հայարտուն» Կենտրոնին ապահովել է ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը:

«Հայոս Բենդ» **վոկալ-գործիքային համոյթում** 10-15 տարեկան հայ պատանիները սովորում են տիրապետել ժամանակակից էստրադային նուագարանները՝ կիթար, բաս-կիթար, հարուածային եւ ստեղնաշարային գործիքներ: Համոյթում աշխատանք է տարւում նաեւ մենակատար-երգիչներ պատրաստելու ուղղութեամբ: «Ներսէս Շնորհալի» պատանեկան երգչախմբից աւագները փոխադրուելով էստրադային խումբ, հանդէս են գալիս որպէս մենակատարներ: Վոկալ-գործիքային համոյթի նպատակն է ձեւաւորուել որպէս կատարեալ էստրադային խումբ: Համոյթի ղեկավար երաժիշտ Վլադիմիր Ասատուրովը հոգում է նաեւ նուագարաններին տիրապետողների սերնդափոխութիւնը:

Շաբաթ եւ Կիրակի օրերին երեք տարեկանից մինչեւ դպրոցական հասակի երեխաները գեղագիտական դաստիարակութեան խմբակում սովորում են նկարել, ծեփել, ստեղծել տարբեր կերպարուեստային աշխատանքներ: Ուշագրաւ է, որ խմբակի աշխատանքները ներկայացւում են ինչպէս Վրաստանում, այնպէս էլ Հայաստանում եւ Արցախում կազմակերպուող մանկական նկարի եւ աշխատանքի տարբեր

ցուցահանդէսներին: «Հայարտան»ը գործող գեղագիտական դաստիարակութեան խմբի սաների աշխատանքները մրցանակային տեղեր են գրաւել Երեւանում կազմակերպուած մանկական նկարի ցուցահանդէսում եւ պարգեւատրուել Արցախ այցելութեան եւ «Տաթեւի թեւեր» փառատօնին մասնակցութեան ուղեգրով: Գեղագիտական դաստիարակութեան ուսուցչուհի Թամարա Սուլխանիշվիլու շնորհիւ այս խմբակի սաների համար արդէն աւանդոյթ է դարձել իրենց նախաձեռնութեամբ թղթից ձեռքով պատրաստած տարբեր հագուստի եւ զարդերի ցուցահանդէսի, ինչպէս նաեւ երկրորդական նիւթերից արհեստական տօնածառերի ցուցահանդէս-մրցոյթի կազմակերպումը եւ միւս հասակակիցների հետ մասնակցութիւնը:

«Հայարտուն» Կենտրոնի նպատակայինը նաեւ հայ երիտասարդներին եկեղեցու շուրջը համախմբելն է, նրանց հայեցի դաստիարակութեանը օժանդակելը եւ ազգապահպանութեան գաղափարներով ուղղորդելը: Երիտասարդական բաժնի (տնօրէն՝ Վալերի Բադալեան) նպատակներից մէկը երիտասարդ առաջնորդների դաստիարակութիւնն է, տարբեր բուհերում սովորող հայ երիտասարդների համախմբումը, դպրոցական-պատանեկան միութիւնների հետ տարուող աշխատանքը, ամառային ճամբարային կեանքի կազմակերպումը եւ սկաուտական ծրագրերին մասնակցութիւնը, սիրողական երգի-պարի խմբակների գործունէութիւնը, մարզական տարբեր ձեւերից Վիրահայոց Թեմի «Հայարտուն» գաւաթի համար միջոցառումների անցկացումը:

Կազմակերպւում են տարբեր սեմինարներ, խորհրդաժողովները, որոնց մասնակցում են ինչպէս մայրաքաղաքի, այնպէս էլ հայաբնակ շրջանների երիտասարդները: Նմանատիպ սեմինարները, վարժանքները եւ խորհրդաժողովները նպաստում են տեղերում համայնքային կեանքը աշխուժացնելուն, միջոցառումներ կազմակերպելուն, երիտասարդի օրը շրջանում, գիւղում հետաքրքիր եւ բովանդակալից դարձնելուն:

Հայ երիտասարդութեան վրաց հասարակութեանը համարկուելուն, իրենց իրաւունքների եւ պարտականութիւնների յստակ իմացութեանը նպաստում են «Հայարտուն» Կենտրոնում կազմակերպուած ամէնշաբաթ-եայ դասախօսութիւնները քաղաքացիական դաստիարակութիւնից: Վրաստանի տարբեր շրջանների հայ երիտասարդների մասնակցութեամբ իրականացւում են ճանաչողական ուխտագնացութիւններ Վրաստանի պատմական վայրեր, մայր հայրենիք եւ Արցախ:

Երիտասարդական կազմակերպութիւնը տանում է հայ գրողների եւ հասարակական գործիչների Թբիլիսիի Խոջիվանքի պանթէոնի, Վերայի գերեզմանատան խնամքը: Երիտասարդների կամաւորական խմբերը կազմակերպում են բարեկարգման շաբաթօրեակներ, անցկացնում ծառատունկ, հետեւում անցեալի արժէքների իրավիճակին:

«Հայարտուն» Կենտրոնը աշխատանք է տանում նաեւ հայաբնակ շրջաններում հայկական մշակութային կեանքը աշխուժացնելու եւ զարգացնելու ուղղութեամբ: Այդ նպատակով կազմակերպւում եւ իրականացւում են բազմաբնոյթ միջոցառումներ: Լուրջ աշխատանք է տարւում շրջաններում «Հայարտան» օրինակով կրթա-մշակութային եւ երիտասարդական կենտրոնների ստեղծման ուղղութեամբ:

«Հայարտուն» կենտրոնի դռներն իր սաների եւ այցելուների առջեւ բաց են առաւօտեան ժամը 9ից մինչեւ երեկոյեան ժամը 8: Ժամ առ ժամ գրանցուած ժամանակացոյցով այստեղ այցելած իւրաքանչիւր անձ ստանում է իր հետաքրքրութիւնների պատասխանը. դա լինի մանկահասակ երեխայ, կեանքի ոլորաններում հաստատուելու ձգտումով երիտասարդ, թէ ազգայինի սիրով տոգորուած մարդ: Եւ այդպէս ամէն օր, բացի Երկուշաբթի օրուանից: Կենտրոնը դարձել է հարազատ օջախ ոչ միայն թբիլիսահայերի, այլեւ հայաբնակ տարածաշրջանների բնակիչների եւ Թբիլիսի ժամանող հիւրերի համար: «Հայարտուն» Կենտրոնի Գալուստ Կիւլպէնկեան սրահը աշխատանքային օրերին տրամադրւում է երգչախմբի եւ միւս համոյթների պարապմունքներին, գրեթէ ամէն շաբաթ երեկոյեան այստեղ անց է կացւում որեւէ միջոցառում. ցուցահանդէս ինչպէս հայ, այնպէս էլ այլազգի նկարիչների, լուսանկարիչների մասնակցութեամբ, հանդիպումներ, քննարկումներ, դասախօսութիւններ, շնորհանդէսներ, մրցոյթներ, համերգեր ու մենահամերգեր...:

Իսկ Կիրակի օրերին, այստեղ ընթանում են քրիստոնէութեան դասեր, հոգեբանութեան վարժանքներ, դասախօսութիւններ հայոց պատմութիւնից, կինօֆիլմերի ցուցադրութիւններ եւ քննարկումներ, հանդիպումներ հիւրերի հետ: Երիտասարդներն այստեղ սովորում են նաեւ հայ ազգագրական պարերն ու երգերը, լսում հոգեւոր հայրերի քարոզ խօսքը:

Ահա այս է պատճառը, որ միշտ մարդաշատ է «Հայարտուն» Կենտրոնը՝ հրաւիրող, հետաքրքրող եւ ազգայինին կապող...

Վիրահայոց Թեմի առաջնորդ գերաշնորհ Տէր Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանի ջանքերով նմանօրինակ կենտրոններ են բացուել եւ յաջողութեամբ գործում են Նինոծմինդայում՝ Ռաֆայէլ-Ջաւախք (տնօրէն՝ Վրաստանի Հայ Գրողների «Վերնատուն» Միութեան նախագահ Ժորա Սնխչեան) եւ Բաթումիի՝ Ալեքսանդր Մանթաշով (տնօրէն՝ Սոնա Յովհաննիսեան) անունով: Յուսով ենք, որ նման կենտրոններ կը ստեղծուեն նաեւ Վրաստանի հայաբնակ միւս շրջաններում:

THE ARMENIAN ARTS CENTER IN TBILISI

(Summary)

SUSANA KHACHATURYAN
susana.khachaturyan@armenianchurch.ge

The article is about the current Armenian cultural revival in the Georgian capital, Tbilisi.

It highlights the leading role the Prelacy of the Armenian Apostolic Church in Georgia plays in promoting Armenian culture, through establishing cultural centers in community centers next to churches.

The author reports that the effort to bond new Georgian-Armenian generations to the Armenian church has been at least partly successful as cultural activities pertaining to Armenian music, dance, painting, arts and the Armenian language have attracted the young generations.

The success the Tbilisi center has achieved has encouraged the cultural and religious authorities of the Armenian community in Georgia to launch such Armenian arts and cultural centers in several other regions of Georgia where Armenians constitute the majority or in areas which have a large Armenian population.